

Համեստախայ  
Տիկ.Մանի Գեղպէրեան  
Երջակո.

Ազնիւ Տիկ.Գեղպէրեան.

Երկար ժամանակէ իվեր Ձեր ստորագրութիւնը կրող ոչ մէկ  
թղթակցութիւն չէ հասած մեզի: Լսեցի որ ժամանակ մը Ձեր ազնիւ-  
ներէն մէկուն նշանաուցը, յետոյ ամուսնութիւնը տեղի ունեցած է:  
Գեղեցիկ առիթներ, որոնք անտարակոյս զրազուած պահած են Ձեզի:  
Հանեցէք այս բարեբաստիկ առթիւ ընդունիլ իմ անկեղծ շնորհաւո-  
րութիւններս եւ բարեմաղթանքներս որ նորապսակներս ըլլան երջանիկ  
ամուսնու մը, պատիւ բերելով իրենց ծնողներուն եւ ազգին: Կը ներէ՞ք  
որ գլխաւորաբար զրազումներուս պատճառաւ է որ ուշ մնացի այս  
պարտականութեանս մէջ:

Պրն.Օննիկ Գալուստեանը Ձեզի օգտակարութիւն մը չունեցաւ  
զժրագործարար: Գորագուծները այնպէս էին որ ես մեծ յոյս չունէի  
արդէն, եւ կարծեմ ըսած ալ էի Ձեզի:

Տէր Վրթանէսէն վերջերս ստացած լուրերս մխիթարական չեն  
ներկայացներ Ձեր դպրոցի վիճակը: Ես համոզուած եմ որ Ձեր համայնքի  
ցրուած ըլլալն է առոր գլխաւոր պատճառը. ուստի կը խորհիմ որ  
եթէ մէկ երկու դպրոց բանա՞ տարբեր Հայաստան շրջաններու մէջ,  
յառաջութիւն պիտի գտնէք: Այդպէս է պարագան նիւ ձերզի մէջ  
Երևանըն Սիթիի շրջանի պարագան, ուր 4 տարբեր արուարձաններու  
մէջ զատ զատ դպրոցներ ունին միեւնոյն Նամակալութեան հովանա-  
ւորութեան ներքեւ: Հոս նիւ Եոթթի մէջ քանի մը տեղեր պետա-  
կան դպրոցներու գասարաններուն մէջ կուտանք մեր Հայերէնի դաս-  
րը, իսկ ուրիշ տեղեր կարելի եղած է օգտագործել "Ուսյ եմ Սի եկ"  
կաթոլիկ կամ այլ եկեղեցիներու, եւ այլ յարմար սրահներու մէջ:  
Վստահ եմ որ Թեան կարգադրութիւններ կարելի է ընել Ձեր քաղաքին  
մէջ եւս: Թեեւ ցանկալի է որ կարելի եղածին զափ ամփոփ պահենք  
մեր աշակերտութիւնը, սակայն ուր որ կարելի չէ ընել այդ բանը,  
գոնէ ցրուած վիճակի մէջ իրականացուցած կըլլանք բուն նպատակը,  
որ է՝ տալ Հայերէնի դաստիարակութիւն այնքան շատ թուով մանուկներու,  
որքան Հնարաւոր է: Եթէ այդ ցրուած դպրոցներուն մէջ միաձեւ  
ըլլայ ուսուցումը, ինչ որ անհրաժեշտ է, շատ դիւրութեամբ կարելի  
կըլլայ միասնաբար կազմակերպել դպրոցական Հանդէսներ, գաշտազնա-  
ցութիւն, խմբական այցելութիւններ, եւ այլն:

Շար.

Քրեական մեղադրանքի էջերուն մէջ կարգադրած է Թէ 10 նոր գործը-  
նէր բացուած են այս տարի. մեծ չափով աւելցած է նաեւ արակերտ-  
ներու քննչանուր թիւը: Անորի տարի ֆրակցիոնս ունէր միայն 20  
արակերտ, այս տարի 43ը անց է անոնց թիւը: Ուսթըրի 22ը 108ի  
հասած է. իսկ Տիբորայի 60ը 130 կգած է:

Այս միջնորդական երկու յիշերուն առջեւ եթէ լուրջ աշխատանք  
տարուի իմ առաջարկած ձեւիս վրայ, որու մասին ապէ՛տ առաջ խօսած  
էի Տէր Արթուրէի հետ, վստահ եմ որ Ձեր առնչութեամբն ներքեւ  
գործող խնամակալութիւնը եւս պիտի կարգաւորուի ձեռք բերել ազնկալ-  
ուած յաշտութիւնները:

Ուստի վերջացնելով այս երկար նամակս, Հեռադրութեամբ  
կապանմա՛ լսել Ձեր անսակչաց, եւ ուրիշ առաջարկներ, ինչպէս նաեւ  
այլ հարցեր որ կրնաք ունենալ գարացի վերաբերմամբ:

Սիրալիք բարեւներով Ձեզ, Ձեր յարգելի ամուսնոյն եւ Ձեր  
ընտանեկան պարպաքներուն

Մեծ յարգանքով՝



Արամ Յէրանիան  
Կրթ. Տնօրէն  
Թեմի Հայ Դպրոցներու

Հոկտեմբեր 8, 1959

Համեստափայլ  
Տիկ.Մարի Պէրպէրեան  
Ատենապետ Հայ Դպրոցի Խնամակալութեան  
Շիրակո.

Ազնիւ Տիկ.Պէրպէրեան.

Տէր Հայրը իր Հոկ.6 թուակիր նամակով կը տեղեկացնէ մեզի, թէ աշխատանքներու սկսուած է, վերաբանալու համար համայնքիդ Հայ դպրոցը: Ուրախ ենք նաեւ որ խնամակալութիւնդ ընդունած է շարունակել իր գործը այս տարի եւս:

Քանի մը անգամներ գոցուելու վիճակին հասնող, եւ ի վերջոյ իր գոնեքը գոցող դպրոցը դիւրաւ չվերաբացուիր, եւ յաջողութիւն չկրնար ապահովել, եթէ անցեալի անյաջողութեան պատճառները չվերաբացուին:

Դժբաղդարար Տէր Հայրը իր նամակին մէջ չըսէր թէ ինչ միջոցներ ձեռք առնուած են այս տարի յաջողապէս շարունակելու համար գործը, ի մասնաւորի ուսուցչի եւ փոխադրութեան հարցերու վերաբերմամբ, որք Ձեր դժուարութիւններուն ամենէն շեշտուածներն են:

Առաջին հարցը լուծելը դժուար պիտի չըլլայ Ձեզի համար, որովհետեւ Շիրակո փոքր քաղաք մը չէ, եւ անպատճառ ուսուցչութեան յարմար տիկիներ կամ օրիորդներ կը գտնուին, հիներուն կամ եկեղծներուն մէջ, եթէ լուրջ փնտրուիք կատարուի, եւ վճարման պատրաստակամութիւն յայտնուի:

Իսկ երկրորդ դժուարութիւնը լուծելու համար խնամակալութիւնը գտնէ սկզբնական շրջանին նիւթական դժուարութիւններ չպիտի ունենայ, եւ անտարակոյս, եթէ պետք ըլլայ յետագային համայնքը եւս իր բարոյական եւ նիւթական օժանդակութիւնը պիտի քերէ, յաջող ընթացքի մը մէջ մտած գործ մը կանգուն պահելու համար, ինչպէս եղած է ուրիշ համայնքներու մէջ:


Կը ներէք նկատել տալու, ազնիւ Տիկ.Պէրպէրեան, որ եթէ առողջ ծրագրով մը հրապարակ չ'իջնէք, եւ չշահիք հանրութեան համակրանքն ու վստահութիւնը, եւ կրկին անցեալ տարիներու կիս կատար միջոցները պիտի կիրարկուին, եւ դասարանները պիտի մնան նոյնպէս անշուք եւ աննեքկայանալի, մենք վստահ ենք որ դարձեալ միեւնոյն ձախողութեան պիտի մատնուիք, եւ ի թերեւ պիտի ելլեն խնամակալութեանդ, Տէր Հօր եւ Միակն Խորհուրդի աշխատանքները:

Յուսանք այս պարագաները լուրջ կերպով նկատի առնուած են, եւ բարի պիտի ըլլայ Ձիչ մը աւելի լայն տեղեկութիւններ տալ մեզի, Ձեր կարգադրութիւններուն, եւ թրագիրներուն մասին:

Կանխայայտ շնորհակալութիւններով՝ Ձեր շուտափոյթ պատասխանին համար, եւ մազթելով Ձեզ՝ ամէն յաջողութիւն,

*Կարգադր. Կարգադր.*

Մնամք յարգանք  
*[Ստորագրութիւն]*



Շիգակօ, Հոկտեմբեր 6, 1959.-

**ARMENIAN ST. GREGORY  
ILLUMINATOR CHURCH**

Սեպտ. 25, 1959 թուականի Ձեր յարգոյ գրուածեան.-

1000 N. Hoyne Ave., Chicago 22, Ill.  
Phone ALbany 2-9599



Մեծա յարգ

Տիար Ա. Մկրտիչեան

Կրթական Տեսուչ Թեմիս Հայ Դպրոցներու,

Նիւ Եորք.-

Մեծա յարգ Տիար,

Այսու կը տեղեկացնենք Ձեզ թէ՛ ամսոյս 4 ին, յետ ժամերգութեան, Եկեղեցւոյս սրահին մէջ գումար- ունեցաւ Համայնքիս ԲԱՅԱՌԻԿ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ, որուն Օրակարգի հարցերէն մէկն էր ՀԱՅ ԴՊՐՈՑԸ ՎԵՐԱԲԱՆԱԼՈՒ ՀԱՐՑԸ.-

ՈՐՈՇՈՒՆՅԱԻ, Ս. Եկեղեցւոյս հովանիին տակ գըտ- նըւող Հայ Դպրոցը փութով վերաբանալ:

Հայ Դպրոցի աշակերտութեան թիւը նուազած ըլլա- լուն հետեւանքով, թէեւ նախորդ Խնամակալութիւնը հը- րաժարած էր. սակայն այս ժողովին մէջ մեր կողմէ եղած խնդրանքին ընդ առաջ երթալով Խնամկ. անդամները, խոստա- ցան իրենց պաշտօնը շարունակել մինչեւ յառաջիկայ Տարե- կան Անդամական ժողովի թրւականը:

Այժմ սկսած ենք տունները այցելել՝ աշակերտներ արձանագրելու համար:

Մնամք սիրոյ ողջունիւ եւ Յարգանօք

*Գ. Մանգ Յ. Կարապետյան*

ԹԻՆ 20453  
Ապրիլ 23, 1968

Արժանացնորհ  
Տ. Աարգիս ԲԿՆՅ. Հաշրդհեան  
Հոգևոր Հովիւ Ս. Պրիզոր Լուս. Եկեղեցւոյ  
եւ Լախազահ Միական Խորհուրդի  
Միգակո.

Սիրելի Տէր Աարգիս.

Ստացած ենք 5 Ապրիլ 1968 թուակիր Ձեր նամակը, որով կը տեղեկացնէիք թէ Միական Խորհուրդի անդամներէն Տիար Տէյմս Պոյանեանի Գալիթօքնիա փոխադրուելուն պատճառով անոր տեղ պաշտօնի Հրմելրան էջ մասնակի ընտրութեան ընթացքին յաշորդ առաւելագոյն քուէ ստացող Տիար ձան Տէտեանցօ

Կ'օրհնենք Ձեզ եւ Միական Խորհուրդի անդամները եւ կը մաղթենք որ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ պայծառութեան Համար ի սպաս դրուան Ձեր տառայութիւնները արդիւնաւոր ընծայուին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՑ ԷԱՅՑ, ԵԿԵՂԵՑԻ

Հովիւ

Արժ. Տ. Սարգիս Քհ. Գաշըզեան



# St. Gregory The Illuminator Armenian Church

6700 W. DIVERSEY AVENUE  
CHICAGO, ILLINOIS 60635  
PHONE 637-1711

REV. FR. SARKIS KASHIKJIAN, PASTOR

Արիւ 5, 1968

Գերաշնորհ

Տ.Թորգոմ Ս.Եպկ.Մանուկեան

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Նիւ Եորք

Սրբազան Հայր,

Եկեղեցւոյս Մխական Խորհուրդի անդամներէն, Պր.ճէյմս Պոյաճեան, պաշտօնով, Շիքակոյէն փոխադրուած է Գալիֆորնիա ընտանիքով եւ պիտի չկարենայ շարունակել ծխական Խորհուրդին մէջ իր ծառայութիւնը բերել եկեղեցւոյս:

Այդ իսկ պատճառաւ, հրաւիրեցինք Պր.ճան Տէտեանը, որ ընտրութեանց ընթացքին յաջորդ առաւելագոյն քուէ ստացողը եղած է, գրաւելու Պր.Պոյաճեանի բաց թողած աթոռը:

Յայտնելով զայս առ ի գիտութիւն Ձերդ Սրբազնութեան, կը խնդրենք Ձեր հայրական օրհնութիւնները:

Մաղթելով Ձեզ քաջառողջ արեւշատութիւն.

Մատչիմ ի համբոյր Ձեր Ս.Աջոյն

Մնամ

Որդիական սիրով եւ յարգանօք

*Աւարգիս Քհ. Գաշըզեան*

Սարգիս Քհ. Գաշըզեան

Հովիւ եւ նախագահ

Մխական Խորհուրդին

Քի. 20339  
Մարտ 23, 1968

Արժանացնեմ  
Տ. Մարգարիսյանին, Գաղափարական  
Հոգևոր Հովիտի Ա. Գրիգոր Լուս. Եկեղեցու  
և Արխիեպիսկոպոսի Կարճուրդի  
Միջակի.

Սիրելի Տիպ Մարգարիսյան.

Մայիսի 21 Մարտ 1968 թվականին Ձեր նամակը, որով կը տեղեկանեի թե կը ծրագրեի յառաջիկայ Հոկտեմբեր 6ին անակառաքել եկեղեցույց տեղան արքեպիսկոպոսի և այլ առթիւ հրկիզել եկեղեցույց անուշով անտուան գարաւմարհակը:

Ձեր հրատեղի ընդառաջելով՝ Հոկտեմբեր 6ի շարաքաղեղը կը վերադառնեմ համայնքի մեր այնելուքնա:

Սիրոյ ազնուելի

ԹՈՒՅՈՒՄ ԵՊՈՍՒՆՈՐՈՍ  
Յառջնորդ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻԶ ԸԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ  
Հովիւ  
Արժ. Տ. Սարգիս Գի. Գաշըզմեան



# St. Gregory The Illuminator Armenian Church

6700 W. DIVERSEY AVENUE  
CHICAGO, ILLINOIS 60635  
PHONE 637-1711

REV. FR. SARKIS KASHIKJIAN, PASTOR

Մարտ 21, 1968

Գերաշնորհ  
Տ.Թորգոմ Ս.Եպկ.Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք

Սրբազան Հայր,

Ձերդ Սրբազնութեան արդէն ծանօթ է որ մենք Հոկտեմբերի առաջին Կիրակին, որ այս տարի կը զուգահեռի Հոկտ.6ին, կը տօնակատարենք եկեղեցւոյ շինութեան տարեդարձը:

Ս.Գրիգոր Լուսաւորիչ Հայց.Եկեղեցիին համար 1968ի տարին նշանակալից պիտի ըլլայ, վասն զի այս տարուան տօնակատարութեան առթիւ, կամօքն Աստուծոյ պիտի կարենանք վարել եկեղեցւոյ մնացեալ պարտքի պարտամուրհակը-Մորթկէյնը:-

Այս ուրախ եւ ոգեւորիչ հանդիսութեանց առթիւ կը փափաքինք Ձերդ Սրբազնութեան օրհնաբեր նախագահութիւնը:

Խոնարհաբար կը խնդրենք, Սրբազան Հայր, որ Հոկտեմբերի 6ի շաբաթավերջին, մեր համայնքին հիւրը ըլլաք,Ս.Պատարագի մատուցմամբ եւ Բանին Կենաց պատգամով ու հանդիսութեանց նախագահելով,ուրախացնէք Ձեր հոգւոր զաւակները ու հոգեկան զօրութիւն ներշնչէք մեզ բոլորիս:

Հաւատացէք Սրբազան Հայր, Ձեր ներկայութիւնը մեր մէջ այդ ուրախառիթ օրերուն,պիտի ըլլայ հոգեկան վայելքի եւ երջանիկ ապրումներու անմոռանալի թուական մը, ի մխիթարութիւն Ձեր հօտին եւ ի փառս Աստուծոյ:

Բոլորովին վստահ ըլլալով Ձեր Հայրական բարեխնամ ուշադրութեան,կը յայտնենք մեր շնորհակալութիւնները կանխաւ եւ կ'սպասենք Ձեր հրահանգներուն:

Մաղթելով Ձերդ Սրբազնութեան երկար եւ առողջ կեանք.

Մատչիմ ի համբոյր Ձեր Ս.Աջոյն  
Մնամ

*Այդ շնորհակալութիւնը ի փառս Աստուծոյ*

Որդիական սիրով եւ Զարգանօք  
*Սարգիս Գի. Գաշըզմեան*



Քիւ 21227  
Սեպտեմբեր 6, 1968

Արժանաշնորհ  
Տ. Սարգիս Էհնյ. Գաշրգմեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Լուս. Եկեղեցւոյ  
եւ Նախագահ Ժական Խորհուրդի  
Շիգակո.

Սիրելի Տէր Սարգիս,

Ստացած ենք 11 Յուլիս 1968 թուակիր Ձեր նամակը, որուն պատասխանել է առաջ առիթը ունեցանք Ձեզի հետ «Նճնապէս խօսելու էվրեսթրնի մէջ:

Վիսասարկաւազ եւ Սարկաւազ ձեռնադրելու կապակցութեամբ կարգ մը պայմաններուն ցոնկ մը իմբազրած եւ զրկած էինք թուր հոգեւորականներուն: Գր յուսանք որ Ձեր արձակուրդէն վերադարձին ստացաք այդ շրջաբերականը:

Ըստ տրուած ցուցմունքներուն Ձեր ներկայացուցած թեկնածուները եթէ պատրաստ պիտի չըլլան մինչեւ Հոկտեմբեր 6, երբ մենք Շիգակոյի մեր եկեղեցւոյ համայնքին մէջ պիտի գտնուինք, կարելի է ծրագիր մը պատրաստել օգնելու համար թեկնածուներուն:

Մենք կը շանանք շրջաբերականով ներկայացուած պահանջներուն համաձայն նիւթեր հայթայթել եւ թելադրութիւններ ընել քաջալերելու համար ձեռնադրութեան թեկնածուները:

Մեր այցելութեան թուականի եւ ժամի մասին մանրամասնութիւններ Ձեզի պիտի հաղորդենք:

Սիրալիր ողջոյններ Ձեզ եւ Ժական Խորհուրդի թուր անդամներուն:

Սիրոյ ոգիւնով

ՔԱՐԳԱՄ ԱՐՔԵՎԻՍՏՈՐԳՈՍ  
Առաջնորդ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ԼԱՅՑ, ԵԿԵՆՅԻ  
Հովիւ  
Արժ. Տ. Սարգիս Քհ. Գաշըզնեան



# St. Gregory The Illuminator Armenian Church

6700 W. DIVERSEY AVENUE  
CHICAGO, ILLINOIS 60635  
PHONE 637-1711

REV. FR. SARKIS KASHIKJIAN, PASTOR

Յուլիս 11, 1968

Գերաշնորհ

Տ.Թորգոմ Ս.Արք.Մանուկեան

Առաջնորդ Հայոց Հիւս.Ամերիկայի

Նիւ Եորք

Սրբազան Հայր,

Եկեղեցւոյ Մխական Խորհուրդը իր Յուլիս 9, 1968 Երեքշաբթի երեկոյեան ժամը 9-ին, Հովիւին նախագահութեամբ ունեցած նիստին մէջ հետեւեալ երկու որոշումները անցուց.

- ա.- Խնդրել Ձերդ Սրբազնութենէն, որ եկեղեցւոյ ուրարակիր, Պր.Մակար Նահապետեան, իր երկարատեւ եւ նուիրուած ծառայութեան համար Սարկաւագի աստիճան ստանայ, տրուած ըլլալով որ եկեղեցիս սարկաւագ չունի
- բ.- Եւ եկեղեցւոյ Դպրաց Դասի ղեկավար Պր.Մարք Նահապետեան ստանայ ուրարկրելու իրաւունք:

Սոյն մեր որոշումը եւ փափաքը Ձերդ Սրբազնութեան հաւանութեան յանձնելով կը ուզենք համեստօրէն Ձեր ուշադրութեան յանձնել, թէ յարմարագոյն ժամանակը պիտի ըլլայ, երբ մեզի հետ պիտի ըլլաք դուք, եկեղեցւոյ Շինութեան Տարեդարձին, Հոկտ.ի 6ին, 1968 Շաբաթ եւ Կիրակի օրերը:

Կը յուսանք որ մեր խնդրանքը կ'արժանանայ Ձեր Հայրական հոգածութեան:

Մաղթելով Ձերդ Սրբազնութեան քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն գործոց յաջողութիւն.

Մատչիմք ի համբոյր Ձեր Ս.Աջոյն  
Մնամք

Որդիական սիրով եւ յարգանօք  
Վարդիս Թէյ. Գաշըզնեան  
Սարգիս Քհ. Գաշըզնեան  
Նախագահ

*Gregory H. Nahabedian*  
Տօրհ Նահապետեան  
Ատենապետ

*Joel M. Khachaturian*  
Ե՛է յք Մաթէոնեան  
Ատենադպիր

Քիւ 21429  
Դեկտեմբեր 4, 1968

Արժանաշէնորհ  
Տ. Սարգիս ԲՆՅ. Չաշրղմեան  
Հովիւ Ս. Գրիգոր Լուս. Հայց.Սկեղեցւոյ  
եւ Մախազան Ժիական Խորհուրդի  
Միկակո.

Սիրելի Տէր Սարգիս,

Ստացա՛ր ենք 25 նոյեմբեր 1968 թուակիր Ձեր նամակը: Ուրախ եղանք  
անդեկանալով որ դուք եւ ժիական Խորհուրդը գովելի ծրագիրն ունենցած  
էք յարգանքի մաշկերոյթով գտնուելու եկեղեցւոյդ կենտրոնը եւ Միեւո-  
թեան Ծանձնախումբի անենագեա ու գտագամուր Տիար Հայկ Փիտեանը:

Կը գաւինք որ 1969 Փետրուար 9ի շաբաթավերջին մեր ժամանակացոյցը  
թոյլ կ'ի տար որ նոյն ամեն Ձեր Կամայնքին մէջ գտնուինք: Եր մաղթենք  
ցինք Ձեր գեանատանքի արտայայտութիւններուն եւ կը մաղթենք որ Կամայն-  
քիդ մէջէն բազում անդամներ Կենտրոն Հայկ Փիտեանի բարի գործերու օրի-  
նակին եւ ծառայութեան նուիրեալ ոգիին:

Սիրոյ ողջունելու

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵԳԻԱՍԵԱԳՈՍ  
Առաջնորդ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՔ ԼԱՅՑ, ԵԿԵՂԵՑԻ  
Հովիւ  
Արժ. Տ. Սարգիս Գե. Գաշըզնեան



# St. Gregory The Illuminator Armenian Church

6700 W. DIVERSEY AVENUE  
CHICAGO, ILLINOIS 60635  
PHONE 637-1711

REV. FR. SARKIS KASHIKJIAN, PASTOR

Նոյեմբեր 25, 1968

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Ա.Արք. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նախագահ Թեմական Խորհուրդի  
Նիւ Եորք

Սրբազան Հայր,

Եկեղեցւոյս Միական Խորհուրդի նախաձեռնութեամբ, Ս. Գրիգոր  
Լուսաւորիչ Եկեղեցւոյ համայնքը ծրագրած է անակնկալ յարգանքի ճաշկերոյթով  
մը պատուել եկեղեցւոյս Կնքահայրը եւ Շինութեան Յանձնախումբի ատենապետ, Պր.  
Հայկ Բիտեանը, 1969, Փետր. 9ի Կիրակին:

Մեր փափաքն ու խնդրանքն է, որ եթէ ձեր ժամանակացոյցը չի խանգարեր այս  
թուականը, անմահ Սուրբ Պատարագ մատուցանեք մեր եկեղեցւոյ մէջ այդ Կիրակի  
եւ նախագահէք հանդիսութեան:

Մեծապէս շնորհակալ կ'ըլլանք Սրբազան Հայր եթէ մեզ տեղեակ պահէք Ձեր  
որոշումին եւ ժամանման մասին:

Մաղթելով Ձերը Սրբացնութեան քաջառողջ արեւշատութիւն.

Մատչիմ ի համբոյր Ձեր Ա.Աջոյն  
Մնամ

Որդիական սիրով եւ Յարգանք  
*Սարգիս Գե. Գաշըզնեան*  
Սարգիս Գե. Գաշըզնեան

Հովիւ եւ նախագահ  
Միական Խորհուրդի

Քիւ 28686  
Սեպտեմբեր 1, 1972

Արժանաշնորհ  
Տ. Սարգիս Էհնյ. Գաշրգճեան  
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Օլիւղեցւոյ  
Մախազան ծխական Խորհուրդի  
Շիգակօ.

Սիրելի Տէր Սարգիս,

Ստացած ենք Օգոստոս 28 թուակիր 2-եր նամակը:

Ճէք Անդրէասեանի ժամանակցոյցը այնպէս ծրագրուած է որ դժուար  
պիտի ըլլայ թուակներու փոփոխութիւն կատարել: Ա՛ն ինքնազոյնը որ  
ամէն համայնքի մէջ կարգ մը անդամներ զանազան պատճառներով պիտի  
բացակային: Բացի ծխական Խորհուրդէն նաեւ Տիկնանց եւ Երիտասար-  
դաց վարչութեանց անդամներ պիտի հրաւիրուին այս ժողովներուն:

Ճէք Անդրէասեանին հետ այս ժողովներուն պիտի նոյնպէս մաս-  
նակցի Թեմական Խորհուրդի անդամներէն Գրն. Աղուարդ Գորգօեան:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐՉԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Jack

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԿ ԸԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

Հովիւ

Արժ. Տ. Սարգիս Բի. Գաշըզեան



# St. Gregory The Illuminator Armenian Church

6700 W. DIVERSEY AVENUE  
CHICAGO, ILLINOIS 60635  
PHONE 637-1711

REV. FR. SARKIS KASHIKJIAN, PASTOR

Օգոստոս 28, 1972

Գերաշնորհ  
Տ.Թորգոմ Արք. Մանուկեան  
Առաջնորդ Հիւս. Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյ  
Նիւ Եորք,

Սրբազան Հայր,

Ձեր Օգոստոս 16 թուակիր նամակով մեզի տեղեկացուցած էիք, թէ  
Պր. ճէք Անդրէասեան, Սեպտ. 25, Երկուշաբթի օր պիտի այցելէ մեր համայնքը,  
տեսակցութիւններ ունենալու համար եկեղեցւոյս ծխական Խորհուրդին եւ այլ  
կազմակերպութեանց հետ:

Կ'ուզենք Ձերդ Սրբազնութեան հաղորդել, որ այդ թուականը մեզի համար շատ  
անպատեհ է, տրուած ըլլալով որ ծխական Խորհուրդի Ատենապետը, Գանձապահը եւ  
փոխ Ատենապետը քաղաքէն պիտի բացակային ամբողջ Սեպտեմբեր ամիսը:

Պր. Հայկ Բիտեանը որ նաեւ մեր Թեմական Երեսփոխաններէն մէկն է, մինչեւ  
Հոկտեմբերի կէսը քաղաքէն բացակայ պիտի ըլլայ:

Ուստի կը խնդրենք որ Պր. Անդրէասեանի մեր համայնքը տալիք այցելութիւնը  
յետաձգուի մինչեւ նոյեմբեր ամիսը:

Իսկ նոյն օրը Վէսթ Բուլման ալ այցելելը որքան կարելի է չեմ գիտեր:

Յուսալով որ նկատի կարնէք մեր այս խնդրանքը, կը մաղթենք Ձերդ Սրբազնութեան  
քաջառողջ արեւշատութիւն:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս.Աջոյն

Մնամ

Որդիական սիրով եւ յարգանք

*Սարգիս Բի. Գաշըզեան*

Սարգիս Բի. Գաշըզեան

Հովիւ եւ Նախագահ  
Ծխական Խորհուրդի

Jack  
Kashikian



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOSIAN, PRIMATE

Մայիս 31, 1977

**Մեծայարգ  
Տիար Տորոմ Մանուսեան  
Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ  
Նիւ Երկաթի Խորհուրդի Ատենապետ  
Շրջակո.**

**Յարգելի Տիար Մանուսեան,**

Նորոգ հանգուցեալ Հայկ Գավուրճեան 102 տարեկան պիտի ըլլար այս տարեկան Օգոստոսին: Ետըջ քառասունըհինգ տարիներ յօգուտ իր ազգին եւ եկեղեցիին կատարած իր դրական ծրագրումներուն, սրտեռանդն ջանքերուն եւ իրագործումներուն ամենէն գեղեցիկ կոթողը պիտի մնայ Մայր Տաճարի, Մշակութային Կեդրոնի եւ Առաջնորդարանի համալիրի կառուցումը նիւ Եորք քաղաքի սրտին վրայ:

Լուսահոգի Հայկ Գավուրճեան իր կեանքի մինչեւ վերջին պահը մտածեց եւ աշխատեցաւ կերպն ու միջոցը գտնել Մայր Տաճարի պարտուց բարձման: Այս մեծ բարերարին շունչը դժբախտաբար յանկարծ սպառեցաւ, առանց լրացնել կարենալու իր այդ առաջադրութիւնը:

Իր մեկնումով ձգուած այս խոշոր բացը կամրջելու համար Առաջնորդարանէն ներս նոր ծրագրումներով զբաղեցան Հայկ Գավուրճեանի անձն ու ոգին յարատեւ վառ պահելու նախանձախնդիր բարեկամներ: Անոնք, յետ լուրջ խորհրդածութեան, յառաջացուցին Կեդրոնական Գործադիր Մարմին մը, որուն կազմի անդամներն են.

Տիար Տատուր Տատուրեան  
Տիար Սուրէն ֆէսճեան  
Տիար Եղուարդ Պաշեան  
Տ. Գառնիկ Բհնյ. Հալլաճեան  
Տ. Աննակ Բհնյ. Գասպարեան  
Տիար Իիչըրտ Գ. Կրէկըրի

Ատենապետ  
Գանձապահ  
Բ. Գանձապահ  
Բարտուղար  
Բ. Բարտուղար  
Օրինական Խորհրդատու

Կեդրոնական Գործադիր Մարմինը կազմեց Հայկ Գավուրճեանի ոգեկոչման կարգացոյց մը, որուն գործադրութեան ընթացք պիտի սրուի սոյն թուականէն մինչեւ Օգոստոս 20, որ ծննդեան թուականն է ողբացեալ Հայկ Գավուրճեանի:

Յանձնախուժմբի նպատակն է ապահովել 102 անձեր որոնք տրամադիր ըլլան իւրաքանչիւրը 1000 --մէկ հազար-- տուար նուիրել, եւ գտնել 1000 անձեր որոնցմէ իւրաքանչիւրը 102 --հարիւր երկու-- տուար յանձն առնէ նուիրել Հայկ Գավուքճեանի յիշատակին:

Մնացեալ պարտքի գումարն է 750,000 --եօթը հարիւր յիսուն-- հազար տուար, որուն դիմաց դրամատան մէջ ունինք միայն 150,000 --հարիւր յիսուն հազար-- տուար՝ որ մէկ տարուան վճարումն է:

Սոյն նպատակին կարեւորութիւնը նկատի ունենալով կը յանձնարարենք.

1. Հոգեհանգստեան Պաշտօն կատարել մեր թեմի եկեղեցիներուն մէջ Հայկ Գավուքճեանի հոգևոյն համար, անոր մահուան քառասունքին առթիւ, Յունիս 5էն մինչեւ Յունիս 26, ըստ յարմարութեան:

2. Կազմել տեղական յանձնախուժք մը հետապնդելու համար առաջադրուած նպատակը: Յանձնախուժքի անդամներուն անունները համեմատք մեզի դրկել մինչեւ Յունիս 16: Եթէ փափաքին, համայնքներ կրնան քառասունքի Հոգեհանգիստէն յետոյ մատողի ճաշ հրամցնել ներկաներուն, եւ այդ առիթով բացատրել նպատակը եւ ծրագիրը կազմուած յանձնախուժքին: Նուէրները պէտք է Առաջնորդարան դրկուին նուիրատուներու հասցէներով:

3. Ձեր համայնքին մէջ համեմատք գտնել 20 անձեր, որոնցմէ իւրաքանչիւրը փափաքի 102-ական տուար նուիրել Հայկ Գավուքճեանի յիշատակին, Ս. Վարդան Մայր Ծածարի պարտուց բարձման համար:

Լիայոյս ենք որ Կեղրոնական Գործադիր Մարմնի այս սկզբնական աշխատանքներուն սատար հանդիսանալու համար, մեր հոգեւոր հովիւներն ու ծխական խորհուրդները բարենախանձութեամբ պիտի կատարեն յիշեալ ոգեկոչումները եւ պիտի անպայման արդիւնաւորեն նուիրահաւաքման գործը: Այսպէսով լաւագոյնս արտայայտած պիտի ըլլանք մեր սէրը ``Համայնքի նահապետ`` պատուանունով մանչցուած Հայկ Գավուքճեանին, որուն հոգին երկնային լոյսերու մէջէն կը հետեւի մեր համադրեալ ջանքերուն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԷԵՊՈՍԿՈՎՈՍ

Առաջնորդ



Քիւ 26558  
Նոյեմբեր 21, 1979

Հոգեշնորհ  
Տ. Թիրայր Վրդ. Քաշճեան  
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Երզնկա.

Սիրելի Հայր Թիրայր,

Սաացած ենք Նոյեմբեր 18, 1979 թուակիր ձեր նամակը՝ որով  
կը տեղեկացնէք թէ կը ծրագրէք ասրեկան ձեր արձակուրդը անցընել  
Երուսաղէմի մէջ:

Այսու գիրով կ'արտօնենք որ ձեր արձակուրդի շրջանին բա-  
ցակայիք երկրէն, սակայն կը փափաքինք գփանալ թէ ժխական Խոր-  
հուրդիդ հետ ի՞նչ կարգադրութիւններ ըրած էք ձեր բացակայու-  
թեան տեղի ունենալիք եկեղեցական պաշտամունքներու կապակցու-  
թեամբ:

Հաճեցէք գրաւոր կերպով մեզի տեղեկացնել ձեր կարգադրու-  
թեանց մասին:

Ձեզի կը մաղթենք քարի արձակուրդ:

Սիրոյ ողջունելու

ԹՈՐԳՈՄ ԱՐԼԵԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Գերաշնորհ

Տ.Թորգոմ Ս.Արքեպիսկոպոս Մանուկեան

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

նիւ Եորք,

Սրբազան Հայր,

Ատենօք շնորհակալութեամբ ստացած էի Ձերդ Սրբազնութեան  
համար 25672 եւ Մարտ 10, 1978 թուակիրը, որով կը յայտնէիք  
Ձեր բարձր համամտութիւնը արձակուրդս անցնելու արտասահման:

Կամքէ անկախ պատճառներով սոյն ծրագրուած արձակուրդս  
չկրցի անցնել արտասահման:


Արդ նոր Տարուան իմ տարեկան արձակուրդս կը ծրագրեմ  
Յունուար ամսուն, Ս.Ժննդեան տօնի վաղորդայնին, անցկացնելու  
Երուսաղէմ, Ս.Աթոռին եւ իմ հոգեւոր տանս մէջ:

Այս պարագան տեղեկացուցած եմ նաեւ Պատուարժան Ժիական  
խորհուրդիս, բացակայութեանս ընթացքին կատարուելիք եկեղեցա-  
կան արարողութեանց կապակցութեամբ անհրաժեշտ կարգադրութեանց  
համար:

Ցարդ կը նախատեսեմ արձակուրդէս վերադառնալ Փետրուարի  
առաջին շաբթուն:

Խոնարհաբար սպասելով Ձեր հայրական արտօնութեան եւ  
մնալով ի համբոյր Ձեր Ս.Աջոյն

Խոնարհ որդիդ

  
Հ.Ժիրայր Թաշճեան, Վերջին  
Ուխտին Սրբոց Յակովբեանց յԵրուսաղէմ



# St. Gregory The Illuminator Armenian Church

6700 W. DIVERSEY AVENUE  
CHICAGO, ILLINOIS 60635  
PHONE 637-1711

Շիգակո, նոյեմբեր 18, 1999

Գերաշնորհ

Տ.Բարգէն Ս.Նպիսկոպոս Վարժապետեան

Նուիրակ-Առաջնորդի ի Վաշինկթըն

Վիրժինիա

Սրբազան Հայր,

Նախ կու գամ իմ զոհունակութիւնս յայտնելու Ձեզի, որ փութացիր անձամբ ներկայ գտնուելու եւ միխթարելու վշտակցեալ հարազատները եկեղեցւոյս հաւատացեալ անդամներէն Էրզիլէթեան ընտանիքին, իրենց թանկագին ամուսնոյն, իօր, եղբոր եւ ազգականին՝ Ողբացեալ Բարսեղ Էրզիլէթեանի յուղարկաւորութեան ախուր առիթով Հոկտեմբեր 27, 1979-ին

Այսու կը հաստատեմ Էրզիլէթեան ընտանիքին կողմէ Ձեզի եղած հրաւերով կրկին գտնուելու յիշատակի քառասունքին, առիթ Էրզիլէթեան ընտանիքին հետ:

Այս առիթը օգտուելով Ձերդ Սրբազնութեանդ տրուած հանգամանքներէն, մենք եւս կը փափաքինք հրաւիրել Ձեզ, Ձեր ուխտի Ս.Եւ Անմահ Պատարագը մատուցանելու մեր եկեղեցւոյ մէջ, Կիրակի, Դեկտեմբեր 9, 1979 ին: Նոյն օրուան պատարագին պիտի յիշատակուի նաեւ եկեղեցւոյս նորոգ հանգուցեալ անդամներէն Այրի Տիկին Թոգ Սիրվարդ Փակլաբանը, անոր եւս յիշատակի քառասունքին առթիւ:

Կրկին սպասելով Ձեր շնորհաբեր եւ միխթարաբեր այցելութեանց եւ մատչելով ի համբոյր Ձեր Ս.Աջոյն եւ

Որդիական սիրով՝

Պատճէն՝

Գերաշնորհ

Տ.Թորգոմ Ս.Արք.Մանուկեան

Առաջնորդին Հայոց Ամերիկայի

Հայր ծիրայր Թաշմեան- Հովիւ

Քիւ 26442  
Յունիս 27, 1979

Հոգեշնորհ  
Տ. Ժիրայր Վրդ. Թաշճեան  
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Շիզակօ.

Սիրելի Հայր Ժիրայր,

Ստացած ենք Յունիս 19, 1979 թուակիր ձեր նամակը՝ Հնդկաստանի  
Մալապար Եկեղեցւոյ Կաթողիկոսին Շիզակօ այցելութեան կապակցութեամբ:

Ուրախ ենք ձեր կատարած կարգադրութեանց համար՝ վայել շուքով ըն-  
դոնելու համար նորին Սրբութիւն Գասիլիոս Մար Թումա Մաթէոս Ա.  
Կաթողիկոսը:

Կը ցաւինք որ մենք անձնապէս պիտի չկարենանք ներկայ գտնուիլ այս  
այցելութեան առթիւ կազմակերպուած հանդիսութեանց: Գուրբ եւ ներկայ  
եղող հոգեւոր եղբայրները պատշաճը կը կատարէք որպէս մեր ներկայացու-  
ցիչը:

Ուրախ պիտի ըլլանք եթէ նորին Սրբութեան այցելութեան ավարտին  
մեզի ամփոփ տեղեկագիր մը ներկայացնէք:

Սիրոյ ողջունելի

ԹՈՐԳՈՄ ԱՐԷԵԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ



# St. Gregory The Illuminator Armenian Church

6700 W. DIVERSEY AVENUE  
CHICAGO, ILLINOIS 60635  
PHONE 637-1711

Եիզակո, Յունիս 19, 1979

Գերաշնորհ

Տ.Թորգոմ Ա.Արքեպիսկոպոս Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք,

Սրբազան Հայր,

Համոյքն ունիմ սեղեկացնելու Ձեզ կարգադրութիւնները,  
Հնդկաստանի եւ Արեւելքի մալաբար Եկեղեցւոյ Կաթողիկոս, Նորին  
Սրբութիւն Բասիլիոս Մար Թոմա Մաթէոս Ա.ին Եիզակո այցելութեան:

Նորին Սրբութիւնը Եիզակո պիտի ժամանէ Յունիս 21, 1979  
Ետք կ'էսորէն ետք օդային զիծով: Երեկոյեան ժամը 6.00ին Գանդիսաւոր  
'՝Հրաշափառ'՝ի երգեցողութեամբ մուտք պիտի զործէ Հայոց Ս.Գրիգոր  
Լուսաւորիչ Եկեղեցին, ուր պիտի կատարուի Ետք երեկոյեան Կիրակ-  
մուտքի ժամերգութիւն եւ Կարգադրութեան Կատարազը Ս.Գատարազը  
Գայկական ձէտով, Նորին Սրբութեան նախագահութեամբ:

Յաւորա Ետք երեկոյեան Ս.Գատարազին, բարի գալստեան ընդու-  
նելութիւն եւ Աջամբոյր՝ եկեղեցւոյս սրահին մէջ:

Յաջորդ օրը, Կիրակի, Յունիս 22, 1979-ին Նորին Սրբութիւնը  
մալաբար ձէտով Գանդիսաւոր է Ս.Գատարազ մատուցանել մեր եկեղեցւոյ  
մէջ եւ սալ իր ողջոյնի պատգամը իր Գոսին եւ ներկայ Գաւառացիոց:

Նոյն օրը երեկոյեան ընդունելութեան Յանձնախումբին կողմէ  
պիտի արուի Գանդիսաւոր ճաշկերոյթ ի պատիւ Նորին Սրբութեան, եկեղեցւոյս  
սրահին մէջ:

Մալաբար Եկեղեցւոյ Ամերիկայի առաքելավայրի գլխաւոր Եպիսկոպոս  
Գերաշնորհ Տ.Թոմա Մար Մակարիոսէն ստացած եմ սոյն կարգադրութիւնները  
Գատարող Յունիս 14, 1979 Թուակիր եւ Գամար 28 նամակը:

Ինչպէս Գեոաձայնով սեղեկացուցած եմ շրջանիս Գոգեւորականներէն  
Հայր Ենորիցին, յատուկ նամակով եւս պիտի սեղեկացնեմ շրջանիս Գոգեւ-  
կանները եւ Միջին Արեւմտեան Եկեղեցական Խորհուրդը, զիրենք եւս  
Գրաւիրելու այս յոյժ պատմական առիթին ներկայ գտնուելու:

Յուսալով որ Ձեր Գայրախնամ Տեսչութեան ներքեւ կարգադրուած  
սոյն ծրագիրը Ձեր օրհնութեան եւ վաւերացման կ'արժանանայ, իոնարհաբար  
պիտի խնդրէի որ Ձերդ Սրբազնութիւնը անձամբ կամ իր անձնական ներկայա-  
ցուցիչին միջոցաւ բերէր իր սրտազին մասնակցութիւնը, պատմական այս մեծ  
եւ Հնորհարք առիթին:

Մտաշելով ի Գամբոյր Ձերդ Սրբազնութեան Աջոյն  
Խոնարհ Արդիդ

Հ.Ճիրայր Կող.Թաշմեան  
*[Handwritten signature]*

Քիւ 26947  
Յուլիս 18, 1980

Հոգեշնորհ  
Տ. Ժիրայր Վրդ. Քաշմեան  
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Երզնկա.

Սիրելի Հայր Ժիրայր,

Սաացած ենք Յուլիս 1, 1980 թուակիր ձեր նամակը:

Երուսաղէմ ձեր մեկնումին կապակցութեամբ սկիզբէն թելադրեցինք ձեզի որ ծիական Խորհուրդիդ ներկայացնէք այս հարցը եւ եթէ ձեր ծիական գաշտօնին հետ կապուած գարաականութիւնները կարելի ըլլայ այլ կերպով կարգադրել, մենք կը բաշխուինք որ դուք եւս մասնակցիք Երուսաղէմի մէջ կայանալիք հանդիպումին:

Իսկ ձեր հովուական գաշտօնի փոփոխութեան կապակցութեամբ կը փափարինք ձեզի տեղեկացնել թէ ներկայիս կարելիութիւն չկայ նման փոփոխութիւն մը կատարել, բացի այն պարագայէն որ դուք մասնաւոր պատճառներ ներկայացնէք՝ որոնք ստիպողական դարձնեն այդպիսի որոշում մը անսելու անհրաժեշտութիւնը:

Ձեզի կը մաղթենք բաշտողութիւն եւ յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ՅՈՐԳՈՄ ԱՐԵՍԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Օրինակ՝ ծիական Խորհուրդի Ասենապետին

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Հայաստանեայց  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711

Շիգակո, Յուլիս 1, 1980

Գերաշնորհ

Տ.Թորգոմ Ս.Արքեպիսկոպոս Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
նիւ Եորք,


Սրբազան Հայր,

Տեղեակ էք արդէն Երուսաղէմի Հայոց Ս.Պատրիարք Հօր  
Կոչնագիրէն, խորհրդակցութեան մը հրաւիրելու Երուսաղէմի  
Ժառանգաւորաց Վարժարանէն եւ Ընծայարանէն ընթացաւարտ  
հոգեւոր հայրերն եւ եղբայրները յառաջիկայ Օգոստոսին:

Իբրեւ Միաբան Ս.Աթոռին, պարտականութիւն կը նկատեմ  
ընդառաջելու սոյն կոչնագիրին, եւ առ այդ խոնարհաբար կը  
խնդրեմ Ձերդ Սրբազնութենէն բացակայութեան ազատութիւն  
ամիսով մը բացակայելու Շիգակոյի հայոց Ս.Գրիգոր Լուս.  
Եկեղեցւոյ հովուական պատասխանատուութիւններէս Յուլիս  
15-էն սկսեալ:

Յառաջիկայ նոր տարեշրջանի մը սեմին պարտաւոր կը  
զգամ կրկին անգամ դիմելու Ձեզ, զիս ազատ կացուցանելու  
հովուական պարտականութիւններէս, քանի նկարագիրս եւ կոչումս  
պիտի չզօրեն օգտակար ըլլալու այս համայնքի կարիքներուն:

Սպասելով Ձեր հայրախնամ Տեսչութեան տնօրինութեան եւ  
բարձր արտօնութեան եւ մտաչելով ի համբոյր Ձեր Ս.Աջոյն եւ  
ողջունիւ սիրոյ

Խոնարհ Արդիդ՝  
  
Հ.Թորոմի վրդ. Թաշմեան



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Թիւ 27581  
Նոյեմբեր 24, 1981

**Հոգեշնորհ**  
**Տ. Ժիրայր Վրդ. Թաշճեան**  
**Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ**  
**Երզնկո.**

**Սիրելի Հայր Ժիրայր,**

Այսու գիրով կը յայտնենք թէ համայնքիդ պատգամաւորներուն պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք նոր պատգամաւորներուն եւ անոնց անձնափոխանորդներուն համար, թեմական Կանոնադրութեան 14-Գ եւ 54 յօդուածներուն համաձայն, եւ 1980 տարուան համայնքիդ տեղեկագրին մէջ արձանագրուած տրատու անդամներու թիւին հիման վրայ:

Կը յանձնարարենք որ ձեր նորընտիր պատգամաւորներուն անունները եւ հասցէները Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը Փետրուար ամսուան սկիզբը, որպէս զի կարելի ըլլայ հրաւիրել զիրենք թեմական Պատգամաւորական Ժողովին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 6-8, 1982, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը՝ հիւրընկալութեամբ նիւ Պրիթըն Գրնէթիքէթի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ:

Կը թելադրենք որ նորընտիր պատգամաւորներուն ինքնութիւնը հաստատող վկայագիրը Հոգեւոր Հովիւին, ծխական Խորհուրդի Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ ստորագրուած՝ Առաջնորդարան ղրկէք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրներուն հետ:

Կը ներկայենք Առաջնորդարան ղրկուելիք վկայագրին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով օրինակը՝ որպէս նմոյշ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՍ  
Առաջնորդ



Թուական

Այսու գիրով կը հաստատենք որ Տիար կամ Տիկին -----  
հաւատաւոր անդամ է մեր Եկեղեցւոյ եւ ----- 1982ին  
զումարուած Տարեկան Անդամական Ժողովի ընթացքին ընտրուած է Թեմական  
պատգամաւոր:

-----  
Ժխական Խորհուրդի  
Ատենադպիր

-----  
Ժխական Խորհուրդի  
Ատենապետ

-----  
Հոգեւոր Հովիւ

Date

-----  
This is to certify that \_\_\_\_\_ is a member in good  
standing of the \_\_\_\_\_ Armenian Church; and  
was duly elected a Diocesan Delegate by the General Assembly on  
\_\_\_\_\_.

-----  
Parish Council Secretary

-----  
Parish Council Chairman

-----  
Parish Priest

Քիւ 28692  
Յուլիս 25, 1984

Արժանաշնորհ  
Տ. Վահրամ ՔՆՆյ. Հազարեան  
Հոգեւոր Մասակարար  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Շքեակօ.

Սիրելի Տէր Վահրամ,

Ստացած ենք Յուլիս 18, 1984 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ կը փախցիք ձեր ասրեկան արժակուրդը անցքնել մեր թեմէն դուրս համայնքներու մէջ:

Այսու զիրով կ'արտօնենք որ ձեր արժակուրդի, Օգոստոս 18-24, դուր լացակայիք ձեր համայնքէն՝ ծիական ետրուրդին հետ կառարելով անհրաժեշտ կարգադրութիւնները ծախին համար:

Ձեզի կը մաղթենք յաշողութիւն եւ բարի արժակուրդ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Հայաստանեայց  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711

Յուլիս 18 1984

Շիգակո Իլլինոյ

Գերաշնորհ

Տէր Թորգոմ Սրբզն. Արքեպիսկոպոս Մանուկեան

Առաջնորդ Արեւելեան Թեմի Մ.Ն. Ամերիկայի

Նիւեօրք, Նիւեօրք.


Սրբազան Հայր,

Ներկայիս կուգամ խնդրել ձեր Սրբազնութեան արտօնութիւնը,

այս տարուան արձակուրդս առնելու համար:

Եթէ արտօնուի պիտի փափաքէի Օգոստոս 18 էն մինչեւ Օգոստոս 24  
բացակայիլ Շիգակոյէն, այցելելու համար մօտաւոր ազգականներս ու բարեկամներս  
որոնք կը բնակին Թօրանթօ, Մօնթրէալ եւ Բալթիմօրը քաղաքները:

Մատչելով ի Համբոյր 2երդ Ս. Աջոյն

  
Վահրամ ԲԳՆԵՅ. Հազարեան

այն

Ձիւ 28777  
Սեպտեմբեր 20, 1984

Արժանաշնորհ  
Տ. Վահրամ ԶԻՆՅ. Հագարեան  
Հոգեւոր Դասակարար  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Շագակօ.

Սիրելի Տէր Վահրամ,

Ժամանակին անացած ենք ձեր նամակը՝ տարկաւազի եւ դպիրի ձեռնադրու-  
թեան կապակցութեամբ:

Այս ձեռնադրութիւնները մենք կը կատարենք ձեր Եկեղեցւոյ մէջ՝ յաջորդ  
անգամ երբ այցելենք ձեր համայնքը:

Ձեզի եւ ձխական խորհուրդիդ անդամներուն կը մաղթենք քաջատողտութիւն  
եւ եկեղեցանուէր ձեր զործերուն յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԵՈՐԳՈՄ ԱՐՁԵԳՈՍԿՈԳՈՍ  
Առաջնորդ

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Հայաստանաց

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711

Օգոստոս 27, 1984

Գերաշնորհ  
Տէր Թորգոմ Սրբազան Արքեպիսկոպոս Մանուկեան  
Առաջնորդ Արեւելեան Թեմի Ամերիկայի  
Նիւ Եօրք, Նիւ Եօրք

Սրբազան Հայր,

Ներկայիւս կուգանք խնդրել ձեր Սրբազնութենէն, աստիճանի շնորհում  
Սուրբ Եկեղեցւոյս հաւատարիմ եւ նուիրուած երեք դպիրներուն համար:

Կը խնդրենք սարկաւագութեան վեցերորդ աստիճան, ուրարակիր դպիր  
Գեղամ Բարսեղեանի համար: Գեղամ Բարսեղեան, Սուրբ Եկեղեցւոյս սիրուած  
եւ յարգուած բազմաշխատ դպիրը, ծանօթ է ծուխիս բոլոր անդամներուն  
կողմէ: Ինքն էր որ բաց բռնեց Եկեղեցւոյս դռները, հոգելոյս Տէր Սարգիս  
Քաշըքճեանի վախճանումէն յետոյ մինչեւ Տէր Թիրալոյ Վրդ. Քաշճեանի  
ժամանումը, ամէն կիրակի առաւօտեան ժամերգութիւն կատարելով խումբ  
մը դպիր եւ դպրուհիներու հետ: Գեղամ Բարսեղեանի սարկաւագ դառնալովը  
Սուրբ Խորանին առջեւ պակաս մը եւս պիտի լեցուի. որով պատարագիչը  
առանձինն կը կատարէ վերաբերումը:

Կը խնդրուի նաեւ դպրութեան Հինգերորդ աստիճան, դպիրներ՝ Աւագ  
Բաֆֆի Հազարեանի եւ Վահէ Զալըշքանի համար: Այս երկու երիտասարդներուն  
մէջ կը տեսնենք հաւատարիմ եւ կարգապահ դպիրներու բարեմասնութիւնները.  
իրենց դպրութեան չորս աստիճանները շնորհուեցան Ձեր Սրբազնութեան կողմէ  
Մարտ 25, 1984 ին Փայլոս Հայթսի մէջ: Անոնք մասնակցեցան նաեւ այս  
ամառ Ս. Ներսէս Ճեմարանի սարկաւագութեան դասընթացներուն, Նիւ Եօրքի  
մէջ:

Ժխական Խորհուրդոս գրեթէ ամբողջացուցած է պատրաստութիւնները  
Եկեղեցւոյս օժման 20րդ. տարեդարձի տօնակատարութեանց համար, որ տեղի  
պիտի ունենայ Հոկտեմբեր 21, 1984 կիրակի օր: Այս առթիւ հրաւիրուած  
է Տէր Բարգէն Սրբազան Եպիսկոպոս Վարժապետեան, Սուրբ Պատարագ մատու-  
ցանելու եւ քարոզելու համար: Կը խորհինք որ այդ օրը հո՞ծ բազմութեան  
մը առջեւ վերոյիշեալ դպիրներուն աստիճաններու շնորհումով թէ գնահատած  
պիտի ըլլանք անոնց աշխատանքը, եւ միեւնոյն ժամանակ հետաքրքրութիւն  
պիտի արթնցնենք ուրիշ երիտասարդներու մէջ ալ, դէպի մեզ՝ դէպի եկեղեցի  
մօտենալու, եւ մաս կազմելու դպրաց եւ սարկաւագաց դասերուն մէջ:

Մատչելով ի համբոյր  
Ձերդ Ս. Աջոյն  
*Վահրամ Քոչ. Հազարեան*  
Վահրամ Քոչ. Հազարեան

*Handwritten notes:*  
Կը ապա իմ այ կողմ  
պէս ապա զքեզ 15

Քր. 28849  
Դեկտեմբեր 18, 1984

Արժանաշուրհ  
Տ. Վահրամ ԲՆՆՅ. Հագարեան  
Հոգևոր Աստակարար  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Շիգակօ.

Սիրելի Տէր Վահրամ,

Ժամանակին ստացած ներ նոյեմբեր 5, 1984 թուակիր ձեր նամակը, որով  
մեզ կը հրաւիրէք այցելել ձեր համայնքը:

Մեր շնորհակալութիւնը կը յայտնեմք ձեր հրաւերին համար, եւ 1985  
Յունիս թի շաբաթավերջը կը վերադառնանք Շիգակոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ  
Եկեղեցւոյ մեր համայնքի այցելութեան:

Բարի եղէք մեզ տեղեակ պահել մեր այցելութեան հետ կապուած յիշական  
նորհուրդիդ կարգադրութեանց մասին:

Սիրոյ ողջունիլ

ՅՈՐԳՈՄ ԱՐՁԵՊՈՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Մուրթ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի Հայաստանէայց

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711

Կոյեմբեր 5- 1984

Գերաշնորհ  
Տէր Թորգոմ Արքայան Արքեպիսկոպոս Մանուկեան  
Առաջնորդ Արեւելեան Քեմի Ամերիկայի  
Նիւ Եորք, Նիւ Եորք

Արքայան Հայր

Յառաջիկայ 1985 Յունիս ամսուան մէջ կը փափարինք Մ.Եկեղեցւոյս  
Անուան Տօնն ու Տարեկան Մատաղօրհնութիւնը կատարելու հանդիսութեամբ:

Մեծապէս կը փափարինք որ այս հանդիսութիւններուն դուք նախագահ-  
էիք: Չեք նկատողութեան կը ներկայացնենք երկու թուականներ:

Ա. - Յունիս 9, 1985 Կիրակի. որուն նախորդող Շաբաթ օրը յիշատակն  
է Ս. Գրիգոր Լուսաւորչի Ելն ի Վիրապէն.

Բ. - Յունիս 28, 1985 Կիրակի. որուն նախորդող Շաբաթ օրը յիշատակն  
է Ս. Գրիգոր Լուսաւորչի Գիւտ Նշխարաց.

Յուսալից ենք որ առաջին տոթով իսկ պիտի ստանանք ձեր դրական  
պատասխանը:

- Chicago Յուլի 8-9  
- Greenfield Յուլի 15-16 - *պէտք է*  
- Wabasha Յուլի 22-23

Մատչելով ի հարայր  
Ձերդ Ս. Աջոյն  
*Լեւոն Բէկ Կարապետ*  
Վարամ Զննյ. Հագարեան

- Wabasha եւ Եւրոպէ - 1985  
- DRE Teacher  
- Mrs. Langford

Թիւ 29110  
Նոյեմբեր 4, 1985

Արժանաշնորհ  
Տ. Վահրամ ԶԳՆՅ. Հազարեան  
Առժամեայ Հովիւ  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Շիրակո.

Սիրելի Տէր Վահրամ,

Քնչպէս անձնապէս ձեզի անդեկացուցինք, որոշած ենք Ս. Ծննդեան առթիւ, Կիրակի Յունուար 5, 1986, Եկեղեցւոյդ մէջ Ս. Պատարագ մատուցանել եւ իլ-լինոյի մեր համայնքներու մանուկներուն, պատանիներուն եւ Հայ Դպրոցներու ու Կիրակնօրեայ վարժարաններու աշակերտներուն համար ԾՆՆԴԵԱՆ ՀԱՌԱՔՈՅԹ մը կազմակերպել:

Յունուար 5ի առաւօտեան ժամը 11.00ին Ս. Պատարագ պիտի մատուցանենք: Ներկաները Ս. Հաղորդութիւն պիտի ստանան եւ ապա Եկեղեցւոյդ սրահին մէջ նախ-մաշ պիտի սպասարկուի եւ պատշաճ յայտագիր մը պիտի գործադրուի:

Օրուան ընթերցումները պիտի կարդացուին աշակերտներու կողմէ: Բարի եղէք, իորհրդակցաբար մասնակցող համայնքներու պատասխանատուներուն, ընտրել ընթերցում կատարողները եւ կատարել փորձերը:

Հայ մանուկներու եւ պատանիներու այս ԾՆՆԴԵԱՆ ՀԱՌԱՔՈՅԹի կազմակերպչական աշխատանքները յառաջ ասնելու համար անհրաժեշտ է մասնակցող համայնքներու անդամներէն կազմել յատուկ յանձնարումը մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլայ զբաղիլ սրահի զարդարանքով, նախամաշի պատրաստութեամբ, յայտագրի կազմութեամբ, "Կահանդ Պապայի" ընտրութեամբ եւ մանուկներուն ու պատանիներուն արուեստի նուէրներու հաւաքումով:



Եթէ որեւէ ուղղութեան կարիքը ունենաք՝ կրնաք դիմել Առաջնորդականի Հայ  
Դպրոցներու կրթական կեդրոնի տնօրէն Օր. Սիլվա Տէր Ստեփանեանի:

Հնոթհակալ պիտի ըլլանք եթէ Ս. Գառազի եւ ՅՆՏԳԱՆ ՀԱՌԱՔՈՅՔԻ կարգադրու-  
թեանց մանրամասնութիւնները տեղեկացնէք մեզի:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՇԵՊՈՍԿՈՅՈՍ  
Առաջնորդ

Քիւ 29087  
Յունիս 18, 1986

Արժամաշնորհ  
Տ. Վահրամ Բնյ. Հազարեան  
Առժամեայ Հովիւ  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Սկեղեցւոյ  
Շիգակօ.

Սիրելի Տէր Վահրամ,

Ստացած ենք Յունիս 11, 1985 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ կը ծրագրէք ձեր արձակուրդը, Յունիս 8-21, անցընել Գանատայի մէջ:

Ազատ էք ձեր արձակուրդին բացակայիլ Շիգակոյի ձեր ծուխէն, վստահ ըլլալով որ սխական խորհուրդիկ հետ անհրաժեշտ կարգադրութիւնները կ'ընէք ձեր բացակայութեան ընթացքին կատարուելիք ծրական արարողութեանց կազակցութեամբ:

Բարի եղէք այս մասին տեղեկացնել նաեւ Միջ Արեւմտեան Հայց. Սկեղեցւոյ խորհուրդի նախագահ Հոգչ. Տ. Պարուտան Ե. Վրդ. Գապարամեանին:

Չեզի կը մաղթենք բարի արձակուրդ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷՇԳԻՍՎՈՂՈՍ  
Առաջնորդ

Մուրթ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Հայաստանաց

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711


Յուլիս 11 1985  
Երգակո Իլլինոյ

Գերաշնորհ  
Տէր Քորգոմ Սրբազան Արքեպիսկոպոս Մանուկեան  
Առաջնորդ Արեւելեան Քեմի Մ.Ն. Ամերիկայի  
Նիւ Եորք, Նիւ Եորք.

Սրբազան Հայր  
Ներկայիս կուգամ խնդրել ձեր Սրբազնութեան արտօնութիւնը,  
այս տարուան արձակուրդս առնելու համար:

Եթէ արտօնուի պիտի փափաքէի Յուլիս 8 էն մինչեւ Յուլիս 21  
բացակայիլ Երգակոյէն, այցելելու համար մօտաւոր ազգականներս ու  
բարեկամներս որոնք կը բնակին Թօրանթօ, Մօնթրէալ եւ Բալթիմոր  
քաղաքները:

Մատչելով ի համբոյր Ձերդ Ս.Աջոյն

  
Ահրամ Բինյ. Հազարեան



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30514  
Օգոստոս 29, 1988

Արժանաշնորհ  
Տ. Վահրամ Քհնյ. Հազարեան  
Առժամեայ Հովի  
Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցոյ  
Թիզալօ.

Սիրելի Տէր Վահրամ,

Ստացած ենք Օգոստոս 20, 1988 թուակիր ձեր նամակը:

Ինչպէս տեղեկացուած է ձեզի՝ տարույս Նոյեմբեր 12ին եկեղեցոյդ մէջ տեղի պիտի ունենայ Միջին-Արեւմտեան Ծրջանային Ժողովը: Մեզի համար յարմարագոյն թուականը այդ օրն է: Ժողովէն առաջ, առաւօտեան ժամը 10.30ին կրնանք կատարել օծումը եկեղեցոյդ Մկրտութեան աւազանին:

Բարի եղէք անհրաժեշտ կարգադրութիւնը ընել այս արարողութեան համար, եւ այս մասին տեղեկացնել նոյնատուններուն եւ հաւատացեալներուն:

Հաճեցէք մեզ տեղեակ պահել ձեր եւ Ծխական Խորհուրդիդ կարգադրութեանց մասին:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Առիթ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Հայաստանէայց  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711


Օգոստոս 20, 1988  
Շիրակօ, Իլլինոյ

Գերաշնորհ  
Տէր Թորգոմ Սրբազան Արքեպիսկոպոս Մանուկեան  
Առաջնորդ Արեւելեան Թեմի, Միացեալ Նահանգաց Ամերիկայի  
Նիւ Եօրք, Նիւ Եօրք.

Սրբազան Հայր,

Վերջերս Եկեղեցւոյս նուիրուեցաւ մկրտութեան աւազան մը,  
պիտի խնդրէինք որ առաջին առիթով իսկ երբ քաղաքս այցելէք,  
բարեկամէիք օծումը կատարել, որպէսզի կարենանք օգտագործել զայն:

Մատչելով ի համբոյր Ձերդ Ս, Աջոյն

  
Վահրամ Քինյ, Հագարեան

Ձայ 12/88

Երգուեցիք խորովի մակ

10.30 Ժ

Խմբ. Միւսի

Գ. Խոսեան



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30916  
Յուլիս 24, 1989

Նորին Սուրբ Օծութիւն  
Տէր Տէր Վազգէն Առաջին  
Սրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց  
Մայր Աթոռ Ս. Էջմիածին.

Վեհափառ Տէր,

Ժիգակո Իլլինոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ օծման 25-րդ տարեդարձը յատուկ հանդիսութեամբ պիտի նշուի 1989 Նոյեմբեր ամսուան սկիզբը:

Եկեղեցոյ Ծխական Խորհուրդը փափաք յայտնած է Ձերդ Սրբութենէն Կոնդակ մը խնդրել՝ իրենց համայնքին համար մասնաւոր նշանակութիւն ունեցող այս հանդիսութեան առթիւ:

Ժիգակոյի համայնքի եկեղեցական կեանքը կազմակերպուած է 1915 թուականէն սկսեալ՝ հոգեւոր հովիւ ունենալով Տ. Վահրամ Մ. Վրդ. Նազարեթեանը: 1925 թուականին համայնքը կը գնէ լուտերական եկեղեցի մը եւ զայն կը վերածէ հայկական եկեղեցիի: Տարիներու ընթացքին Թիլիպոյի համայնքի եկեղեցական-ազգային կեանքը հետզհետէ կը զարգանայ: Կ'ունենան Հայկական եւ Կիրակնօրեայ վարժարաններ, եւ զանազան այլ կազմակերպութիւններ: Քսանը-հինգ տարի առաջ նոր կալուած գնեցին՝ եւ նոր Եկեղեցի, սրահ եւ դասարաններ կառուցին: Այժմ Եկեղեցոյ շէնքին կողքին ունին մշակութային եւ ընկերային ձեռնարկներու համար գործածուող ընդարձակ սրահ եւ այլ կրթական յարմարութիւններով օժտուած կեդրոն մը:

Շնորհակալ պիտի ըլլանք եթէ Ձերդ Սրբութիւնը բարեհաճի ընթացք տալ Ժիգակոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ հովիւին եւ Ծխական Խորհուրդին ներկայացուցած փափաքին:

Մատչելով ի համբոյր Վեհիդ Օծեալ Աջոյն  
Խոնարհաբար

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

# Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Հայաստանեայց ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711

Յունիս 16, 1989  
Շիգակո, Իլլինոյ

Գերաշնորհ  
Տէր Թորգոմ Սրբազան Արքեպիսկոպոս Մանուկեան  
Առաջնորդ Արեւելեան Թեմի Մ.Ն. Ամերիկայի  
Նիւ Եօրք, Նիւ Եօրք


Սրբազան Հայր

Ինչպէս որ արդէն տեղեկ էք, նոյեմբեր 12, 1989 ի Կիրակի օրը  
պիտի տօնենք Ս. Եկեղեցւոյս Օծման 25րդ տարեդարձը:

Այս առթիւ հրատարակելի գրքոյքին համար պիտի խնդրէինք ձերդ  
Սրբազնութենէն Օրհնութեան գիր մը:

Պիտի խնդրէինք նաեւ եթէ յարմար կը դատէիք: քարեհամէիք  
նորին Ս. Օծուիլին Տ.Տ. Վազգէն Ա.Վեհափառ Հայրապետէն ալ, սոյն  
Գրքոյքին համար Օրհնութեան գիր մը ապահովել, մեզի:

Մատչելով ի Համբոյր Ձերդ Ս. Աջոյն

  
Վահրամ ԲՆՅ. հազարեան